## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ Սյունիքի մարզպետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍՄ-ԳՀԾՁԲ-2020/04 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի նոյեմբերի 20-ին կնքված N ՍՄ-ԳՀԾՁԲ-2020/04 պայմանագրում 2021 թվականի փետրվարի 01-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառը՝ Համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսումը:

Փոփոխության նկարագրություն՝ Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը:

Փոփոխության հիմնավորում՝ Գնման պայմանագրի 7.5 և 7.15 կետերը:

Պատվիրատու՝ ՀՀ Սյունիքի մարզպետարան

# Համաձայնագիր N 2

ՀՀ Սյունիքի մարզպետարանի և «Այ Էֆ Փի»ՍՊԸ-ի միջև 2020թ-ի նոյեմբերի 20-ին կնքված N «ՍՄ-ԳՀԾՁԲ-2020/4» պայմանագրի

ք.Կապան 01 փետրվար 2021թ

ՀՀ Սյունիքի մարզպետարանը ի դեմս Գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյանի, որը գործում է ՀՀ Սյունիքի մարզպետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Այ Էֆ Փի»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից (երկուսը միասին կիհշատակվեն որպես Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 2020թ-ի նոյեմբերի 20-ին կնքված N «ՍՄ-ԳՀԾՁԲ-2020/4» պայմանագրի 7.5 և 7.15 կետերը, ինչպես նաև հաշվի հառնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու հանգամանքը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ, մատուցել Պայմանագրի №1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով և սույն Համաձայնագրին կցվող 2021 թ. ներքին աուդիտի ենթակա միավորների ցանկով (հավելված 1) նախատեսված կազմակերպությունների ներքին աուդիտի ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), համաձայն սույն համաձայնագրի № 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ծառայության արդյունքը և Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

1.2 Ծառայության հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2021 թվականի հունվարի 8-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, հանդիսանալով Պայմանագրի անբաժանելի մասը:

2.Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5475000 (հինգ միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ծառայության գինը ներկայացված է սույն համաձայնագրի անբաժանելի մաս կազմող № 3 հավելվածում: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով, սույն համաձայնագրի № 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

3.3. Համաձայնագիրը կազմված է 4 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածը հադիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկայինվավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ Սյունիքի մարզպետարան | «Այ Էֆ Փի» ՍՊԸ |
| ՀՀ, Սյունիքի մարզ ք. Կապան Գ.Նժդեհի 1 | ՀՀ, ք.Երևան, Կոմիտաս 49/3, 7-րդ հարկ |
| Գանձապետարան | Յունիբանկ ԲԲԸ |
| 900311080049 | 24104018594400 |
| 09415375 | 00125588 |
| Գլխավոր քարտուղար Է.Մարտիրոսյան | Տնօրեն Վ.Մարգարյան |
| ________________ (ստորագրություն) | ________________ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված № 1
01 փետրվար 2021թ. կնքված
N ՍՄ-ԳՀԾՁԲ-2020/4 *ծածկագրով գնման պայմանագրի N 2 համաձայնագրի*

## 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԵՆԹԱԿԱ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ

| 2021 թվականին ներքին աուդիտի ենթակա միավորներ | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | Աուդիտի ենթակա միավորներ | Ռիսկային խումբը | Նախորդ աուդիտի տարին* | Գումարը թվերով (ՀՀ դրամ) |
| 1 | «Նռնաձոր միջն. դպրոց »ՊՈԱԿ | միջին | 2018թ | 130250 |
| 2 | «Կարճևանի հիմն. դպրոց »ՊՈԱԿ | միջին | 2018թ | 131250 |
| 3 | «Ալվանքի միջն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 132250 |
| 4 | «Բռնակոթի միջն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 5 | «Անգեղակոթի միջն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 6 | Հացավանի միջն. դպրոց ՊՈԱԿ | միջին | 2018թ | 135250 |
| 7 | «Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 8 | «Կապանի մշակույթի կենտրոն »ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136000 |
| 9 | «Արծվանիկի միջն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 137000 |
| 10 | «Շիկահողի միջն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 11 | Կապանի թիվ 1 հիմն. դպրոց ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 12 | Սիսիանի թիվ 5 հիմն. Դպրոց | միջին | 2018թ | 136250 |
| 13 | «Ձագիկավանի (Մուսալամի) միջն. դպրոց »ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 14 | «Տաթևի Սուրեն Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 15 | «Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 16 | «Հալիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 17 | «Տավրուս միջն. դպրոց »ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 18 | «Լեռնաձորի հիմն. դպրոց »ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136000 |
| 19 | «Նորաշենիկի միջն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 20 | Կապանի թիվ 5 միջն. Դպրոց | միջին | 2018թ | 136250 |
| 21 | Կապանի թիվ 7 հիմն. Դպրոց | միջին | 2018թ | 137000 |
| 22 | «Ճակի միջն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 23 | «Ծղուկի միջն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136000 |
| 24 | «Մուցքի հիմն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136000 |
| 25 | «Շենաթաղի հիմն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136000 |
| 26 | Աշոտավանի միջն. Դպրոց | միջին | 2018թ | 136000 |
| 27 | «Դարբասի միջն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136500 |
| 28 | Ախլաթյանի միջն. Դպրոց ՊՈԱԿ | միջին | 2018թ | 142000 |
| 29 | «Կապանի Ռաֆայել Մինասյանի անվան թիվ 11 միջն" դպրոց » ՊՈԱԿ | միջին | 2018թ | 142250 |
| 30 | Քաջարանի թիվ 2 միջն. Դպրոց | միջին | 2018թ | 141250 |
| 31 | Քաջարանի թիվ 5 միջն. Դպրոց ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 32 | «Քաջարանի թիվ 6 հիմն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 141250 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 33 | «Լծենի հիմն. դպրոց »ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 34 | Լոռի միջն. Դպրոց | միջին | 2018թ | 136250 |
| 35 | «Սպանդարյանի միջն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 36 | «Հարթաշենի միջն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 37 | «Գորիսի թիվ 2 հիմն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 127250 |
| 38 | «Գորիսի թիվ 3 հիմն. դպրոց» ՊՈԱԿ | միջին | 2018թ | 136250 |
| 39 | Վարդավանքի միջն. դպրոց ՊՈԱԿ | միջին | 2018թ | 150250 |
| 40 | «Վ. Խոտանանի միջն. դպրոց »ՊՈԱԿ | միջին | 2018թ | 150250 |
| | Ընդամենը | | | 5475000 |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ Սյունիքի մարզպետարան
ՀՀ, Սյունիքի մարզ ք.Կապան Գ.Նժդեհի 1
Գանձապետարան
900311080049
09415375
Գլխավոր քարտուղար Է.Մարտիրոսյան

------------------------------------

(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Այ Էֆ Փի» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Կոմիտաս 49/3, 7-րդ հարկ
Յունիբանկ ԲԲԸ
24104018594400
00125588
Տնօրեն Ա.Քարսեղյան

------------------------------------

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
01 փետրվար 2021թ. կնքված
*N ՍՄ-ԳՀԾՁԲ-2020/4 ծածկագրով գնման պայմանագրի N 2 համաձայնագրի*

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 79211180/501 | Ներքին աուդիտի ծառայություններ | դրամ | 5475000 | 1 | ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան | Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2021թ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ Սյունիքի մարզպետարան
ՀՀ, Սյունիքի մարզ ք.Կապան Գ.Նժդեհի 1
Գանձապետարան
900311080049
09415375
Գլխավոր քարտուղար Ս.Մարտիրոսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Այ Էֆ Փի»ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Կոմիտաս 49/3, 7-րդ հարկ
Յունիբանկ ԲԲԸ
24104018594400
00125588
Տնօրեն Ա.Փ[illegible]

(ստորագրություն)
Կ.Տ.